



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ նախաձեռնութեամբ Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբին, Հայոց Յեղասպանութեան 93րդ ամեակին նուիրուած դասախօսական յուշ երեկոյ մը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 29 Ապրիլի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Ներկայ էին եկեղեցականաց դասը, Ազգ. Վարչութեան անդամներ, հոգաբարձական եւ երեսփոխանական կազմերու ներկայացուցիչներ եւ հաւատաւոր ուխտաւոր հայրորդիք:

Հաւաքական Տէրունական աղօթքէ եւ նահատակներու հոգիներու խաղաղութեան համար արտասանուած «հոգւոց»էն ետք, հանդիսավար Տիկ. Սօնա Մատարեան, բանաստեղծական տողերու մէջբերումներով բացումը կատարեց հանդիսութեան եւ ձեռնհասօրէն վարեց յայտագիրը:

Բանախօսը՝ Գերպ. Միռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, հանգամանօրէն ներկայացուց «Հայոց Յեղասպանութիւնը եւ Եկեղեցականներու Նահատակութիւնը» նիւթը: Պատմական եւ ժամանակագրական վաւերական տուեալներով, ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Օսմանեան Թուրք կառավարութեան ծրագրած եւ գործադրութեան դրած Արեւմտահայաստանի հայաթափումի հայաջինջ քաղաքականութիւնը, որուն զոհ գացին առաւել քան մէկ ու կէս միլիոն հայեր: Հայր Սուրբը խօսեցաւ քաներորդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ գացած հայ ժողովուրդի հողային, մշակութային եւ մարդկային ահաւոր կորուստներու մասին, մանրամասնօրէն նկարագրեց Թրքական խժողութիւններուն նահատակուած հայ եկեղեցականներու կորուստը: Այս բաժինին մէջ հետաքրքրական էր տեսնել Կիրակնօրեայ Դպրոցի, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան երիտասարդ-երիտասարդուհիներու մասնակցութիւնը, որոնք փոխն ի փոխ նահատակ եկեղեցականներու անասելի չարչարանքներն ու մարտիրոսացման պահերը վկայակոչեցին:

Հայր Սուրբը անդրադառնալով Յեղասպանութեան 93ամեակի ոգեկոչման, ըսաւ. «Նահատակներու 93 ամեակի յիշատակը արժեցուցած կ'ըլլանք, եթէ ամո՛ւր բռնենք անոնց հաւատարիմ մնալու գիտակից մեր ուխտը: Ուխտը մեր նահատակ եկեղեցւոյ եւ մարտիրոս եկեղեցական հայրերու եւ միլիոն ու կէս նահատակներու սուրբ աւանդին, ազգային մեր պատմութեան, մշակոյթին, մեր ինքնուրոյն հայեցի նկարագրին, դարաւոր

աւանդութիւններուն, սրբութիւններուն եւ անկորնչելի մեր ոգեկան ժառանգութիւններուն»:

Ապա իր խօսքը եզրակացուց ըսելով. «Յայրորդիք, աշխարհի որ անկիւնն ալ գտնուինք՝ ո՛չ միայն այսօր, կամ նահատակաց 93-ամեակին թէ ամէն Ապրիլի 24-ին, այլեւ ամէն օր պետք է յիշատակենք, վերակոչենք եւ վերանորոգենք Ապրիլեան նահատակաց հաւատարմութեան մեր ուխտը, այսօր եւ ամէն օր հաւաքաբար եւ ազգովին առաւել քան մէկ ու կէս միլիոն անշիրիմ մեր նահատակներու յիշատակին առջեւ, հայութեան եւ հայրենիքին հանդէպ հաւատարմութեան մեր վճռակամութիւնը վերամկրտենք ու վերահաստատենք, հաւատքի ու գիտակից արդար պայքարի սալերուն վրայ մեր ամենօրեայ կռակումով: Մինչեւ արդարութեան վերադարձը՝ արդարութեան պահանջատերերուն: Մինչեւ հողահաւաք ու հայահաւաք»:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին երգերով՝ Բարշ. Չօիրապ Սրկ. Եարալեան եւ Սալբի Մայիլեան: Իսկ Սօսի Կիւրեղեան հանդէս եկաւ ասմունքով:

Փակման խօսքով հանդէս եկաւ Առաջնորդ Սրբազանը, որ գնահատեց Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբի գործունեութիւնը, բանախօս Յայր Սուրբը, գեղարուեստական յայտագրին, ինչպէս նաեւ ընթերցումներով իրենց բաժինը բերող երիտասարդներու մասնակցութիւնը: Ապրիլեան Ոգեկոչումի ձեռնարկներու շրթային՝ Ապրիլի մէջ վերջին օղակը հանդիսացող այս յուշ երեկոն, ըսաւ Առաջնորդ Սրբազանը, իր մարտահրաւերներով եւ փոխանցած ոգեղէն պատգամներով վստահաբար մեզի մտածել կու տայ մեր հողային, մտաւորական, մշակութային եւ մարդկային ահաւոր կորուստներու մասին, միաժամանակ՝ մոխիրներէն յառնող հայ ժողովուրդի ապրելու կամքին, ստեղծագործելու եւ նահատակաց ուղիով անվիատ աշխատելու, պահանջելու եւ պայքարելու մարտունակութեան մասին:

Նահատակներուն ժառանգորդներուս պարտքն է՝ ըսաւ Սրբազանը, անոնց յիշատակը, հաւատքի խայծը անմար պահել մեր եւ նոր սերունդներու սրտին ու կեանքին մէջ: Անոնց նահատակութիւնը եւ կտակը արժեցուցած եւ իրականուցած կ'ըլլանք, երբ նահատակներու հոգին մեր մէջ ապրեցնենք եւ միասնական ճիգերով անոնց անաւարտ երազները իրականացնենք:

Հանդիսութիւնը «Կիլիկիա» երգով եւ «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ: Ապա ներկաները եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ հիւրասիրուեցան հոգաբարձութեան կողմէ:

WESTERN PRELACY GENOCIDE COMMEMORATION LECTURE

The Western Prelacy commemorated the 93rd anniversary of the Armenian Genocide on the evening of Tuesday, April 29th, at St. Mary's Church with a lecture and artistic program. The event was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the

Prelacy Outreach Committee. Among those in attendance were Clergy and Executive Council members, Delegates, and Board of Trustees members.

The evening began with the Lord's Prayer, followed by welcoming remarks by Master of Ceremonies Mrs. Sona Madarian.

The keynote speaker was Very Rev. Fr. Muron Aznikian who spoke on the subject "The Armenian Genocide and the Martyrdom of Clergy". Very Rev. Fr. Aznikian began his lecture by presenting a historical timeline of the Genocide and continued by speaking of the unspeakable losses suffered by the Armenian people, specifically the massacre of thousands of clergy members. During the lecture, Sunday School and Armenian Church Youth Association members read passages depicting the sufferings the clergy endured and the circumstances of their martyrdom.

Very Rev. Fr. Aznikian continued on to say that to honor the memory of our martyrs we must remain true to their ideals and legacy, to our culture, unique identity, traditions, and religious and national heritage. He concluded with a call to remember and commemorate the sacrifices of our martyrs each and every day, and to reaffirm our commitment to fight for our rights until justice is served.

In addition to the lecture, an artistic program took place in which Deacon Zohrab Yaralian and Mrs. Salpi Mayilian participated with songs and Mrs. Sossie Gureghian with poetry recitations.

The event concluded with remarks by the Prelate who began by commending the Outreach Committee, the keynote speaker, and all the program participants. In addressing the topic presented, the Prelate noted that although the lecture recollected the devastating loss of life and land, of our intellectuals and our culture, at the same time we were reaffirmed the will of our people to rise from the ashes and to continue the struggle. The Prelate concluded by stressing that it is the responsibility of all of us to preserve the memory of our martyrs, to uphold their faith, and to honor their martyrdom and legacy by keeping their spirit of sacrifice alive in our hearts and by uniting our efforts in fulfillment of our collective hopes and dreams.

The program concluded with the benediction by the Prelate, followed by a reception at the "Armenag Der Bedrossian" Hall.